

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ
ՔԻՓԼԻՆԳԻ «ԹԵ ԻՆԶՊԵՍ ԸՆԶԱՌՅՈՒԾԸ ԴԱՐՁԱԿ
ԲԾԱՎՈՐ» ՀԵՔԻԱՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ուղղափառ Քիփլինգի «Պատմվածքներ հենց այնպես» ժողովածուն սովորական մանկական գիրք չէ։ Նրանում ընդգրկված հեքիաթներն իսկապես արտասովոր են։ Այստեղ միախլուսվում են անցյալն ու ներկան, մոտիկն ու հեռուն, կողք կողքի են դրվում տարբեր մշակույթներ։ Եվ չնայած գործողությունները կատարվում են տարաշխարհիկ վայրերում՝ անմարդաբնակ կղզի, կուսական անտառ, չոր անապատ, սակայն դրանք շարունակ փոքրիկ ընթերցողի կողքին են, նրա տանը։ Այս արտասովոր հեքիաթների մեծագույն նվաճումը դրանց յուրօրինակությունն է։ Սի բան ակնհայտ է, որ նման հեքիաթներ կարող էր գրել միայն նա, ով անչափ սիրում է երեխաներին և խորապես հասկանում մանկական հոգեբանության նրբությունները։ Դիմելով երեխայի գիտակցության խորախորհուրդ և անանցողիկ շերտերին, ունենալով սուր միտք ու վառ երևակայություն, ամենևին չճնշելով երեխայի երևակայությունը, Քիփլինգը ստեղծում է իսկական առասպել, արտասովոր լեզվախաղ՝ վարպետորեն սպառնիչ պատասխան տալով բազմաթիվ «ինչերի» և «ինչուների», միաժամանակ պահպանելով իր անկրկնելի անհատական համն ու հոտը։

«Թե ինչպես Ընծառյուծը դարձավ բծավոր» հեքիաթը Քիփլինգի «Պատմվածքներ հենց այնպես» ժողովածուի մեջ տեղ գտած տասներկու հեքիաթներից մեկն է։ Հայ ընթերցողին հայտնի են այս հեքիաթի երկու՝ Ա Բուդադյանի (1947) և Ս.Սեֆերյանի (1974, 1992) թարգմանությունները։

Հեքիաթի հիմքում ընկած է աֆրիկյան մի ավանդություն. խայտառակ խնդրում է ընծառյուծին իր բացակայության ժամանակ հսկել իր բույնը և երբ վերադառնալով ամեն ինչ բարվոք վիճակում է գտնում, բծեր է թողնում ընծառյուծի մորթու վրա, իբրև պարգև¹։ Հեքիաթի վերնագիրը ակնհայտորեն կապված է աստվածաշնչային "Can the Ethiopian change his skin or the Leopard his spots?" (Jeremiah, 12:23)² դարձվածքի հետ։

¹ F Posselt, "The Fables of the Veld" in L. Lewis' notes to R. Kipling's "Just So Stories".

² «Թե որ հնդիկը (եթովպացին) փոխի իր մաշկը, ընծառյուծը՝ իր խայտուցները...» Երեմիա 13:23:

Այս անգամ ունկնդիրը տեղափոխվում է Աֆրիկա: Հեքիաթի գործողությունները կատարվում են Բարձր Սարահարթ կոչվող վայրում, շատ հին ժամանակներում, երբ շուրջբոլորը միագույն էր:

In the days when everybody started fair. Best Beloved, the Leopard lived in a place called the High Veld.

Այն օրերին, երբ ամեն մարդ ծառենեցին էր, օ սիրելիս, Ընծառյուծն ապրում էր մի վայրում, որը կոչվում էր Վերին —Վելդ: (Բուդադյան)

Շատ դարեր առաջ, Սիրելի Փոքրիկ, երբ բոլոր կենդանիները միագույն էին, Ընծառյուծը ապրում էր Բարձր Սարահարթ կոչվող վայրում: (Սեֆերյան)

Everybody started fair արտահայտությունն ըստ էության դժվար է մեկնաբանել, սակայն, դատելով հեքիաթի բովանդակությունից, խոսքն ակնհայտորեն ոչ մարդկանց, ոչ էլ առավել ևս նրանց բարեկեցության մասին է, ինչպես Բուդադյանի թարգմանությունն է ներկայացնում: Խոսքը բնության մասին է, այն մասին, որ նախքան կենդանական աշխարհի ներկայիս տեսքը ստանալը բնությունը միապաղաղ էր ու միագույն: Այս առումով Սեֆերյանի թարգմանությունն ավելի համարժեքորեն է փոխանցում հեղինակի միտումը և, հետևաբար, անցումը հեքիաթի հետագա գործողությունների ընթացքին ավելի տրամաբանական է ստացվում:

Սարահարթը ծածկված էր ավազով, և ամեն ինչ ավազագույն, ավազադեղնավուն, ավազադեղնամոխրագույն կամ ավազադեղնամոխրաշագանակագույն էր, նույնիսկ այն կենդանիները, որոնք բնակվում էին այստեղ՝ Ընծուղտը, Այծքաղը, Ջեբը և մյուսները: Բայց բոլորից ամենավազադեղնամոխրադարչնագույնագույնը կատվանման Ընծուղտն էր և ճիշտ ու ճիշտ Բարձր Սարահարթի գույնին էր: Սա Ընծառյուծի մեծագույն առավելությունն էր, քանի որ նա կարողանում էր իր որսին աննկատ մոտենալ և լեղաճաք անել նրան. *...he would surprise them out of their jumpsome lives.*

...նա իր հանկարծակի ուսույունով կարողանում էր վեոթ տալ նրանց թռչուն կյանքին: (Բուդադյան)

...նա ցատկում էր՝ լեղապատառ անելով նրանց, դե, իհարկե, նրանց լեղին էր պատռվում: (Սեֆերյան)

Ընծառյուծի հետ որսի էր դուրս գալիս մի եթովպացի, Ընծառյուծն իր ատամներով ու ճանկերով, եթովպացին՝ նետ ու աղեղով, և այդ ժամանակ կենդանիների վիճակն ավելի էր բարդանում.

...all the rest of them didn't know which way to jump.

...չգիտեին, թե ոտտեղ ոտ ոնել: (Բուդադյան)

...բոլոր կենդանիները, Սիրելի Փոքրիկ, չգիտեին ուր կոտնել: (Սեֆերյան)

Երկար ժամանակ պահանջվեց, մինչև կենդանիները Ընծառյուծից ու Եթովպացուց և նրանց նման ամեն ինչից խուսափելու ելքը գտան: Նրանք կամաց-կամաց սկսեցին հեռանալ Բարձր Սարահարթից՝ Ընծուղտի գլխավորությամբ, քանի որ նա ամենաներկարոտն էր: Երկար, շատ երկար ճանապարհ կտրել-անցնելուց հետո նրանք հայտնվեցին մի խիտ անտառում՝ լի վիթխարի ծառերով, թփերով ու ստվերներով, ու պատսպարվեցին այնտեղ: Օրն անց էին կացնում ծառերի ստվերի տակ կամ կիսաստվերում: Եվ էլի շատ ժամանակ անց այդ ստվերները՝ գծավոր, բծավոր ու պտավոր, այնպես արտացոլվեցին կենդանիների վրա, որ Ընծուղտը դարձավ բծավոր, Ջեբրը՝ գծավոր, իսկ Այծբաղն ու Պտուտակապոզ Կուղուն պատվեցին ծառաբնի գույնի փոքր, մոխրագույն գծերով: Եվ նրանք անորսալի դարձան. ամենուրեք նրանց հոտն էր, նրանց ձայները, բայց նրանք չէին երևում անտառի ստվերներում:

Սա, իհարկե, իրականությունը չէ, սա Քիփլինգի մտքի, երևակայության թռիչքն է, որը մի արտասովոր պատմություն է այն մասին, որ բնությունը խիստ ներդաշնակ է, և կենդանիները, գոյության պայքարին դիմակայելու համար, հարմարված են շրջապատին նույնիսկ իրենց գունավորմամբ: Այս արտասովոր աշխարհը ստեղծված է քիփլինգյան նույնքան արտասովոր հնարներով, որոնք ավելի տպավորիչ ու ճշմարտանման են դարձնում պատմությունը:

To a hair արտահայտությունը, որը *to one hair* ձևն է ստացել, հայերեն թարգմանաբար նշանակում է *միշտ և միշտ, իսկ և իսկ*: Քիփլինգն այն օգտագործել է իր պատմությանը առավել հավաստիություն ու ճշգրտություն հաղորդելու համար: Թարգմանական *միախառնվում էր և չէր զանազանվում* տարբերակներում ներգործության այս պահն, իհարկե, զիջում է բնագրին: Թարգմանիչները գերադասել են համարժեքության հասնելու բացատրական, մեկնաբանական եղանակը:

Surprise them out of their jumpsome lives զավեշտական դարձվածքը ստեղծվել է *frighten somebody of his wits* դարձվածքի նմանողությամբ (անալոգիայով), որը նշանակում է *խելքը թոցնելու չափ վախեցնել*: *Jumpsome* բառը մանկական խոսքին հատուկ քիփլինգյան նորաբանություն է, որը կարելի է բացատրել որպես *թովոան, ցատկոտոդ*: Արտահայտությունն ամբողջությամբ կարելի է հետևյալ կերպ մեկնաբանել՝ ընծառյուծը, հանկարծակի հայտնվելով, այնպիսի անակնկալ էր մատուցում իր գոհին, որ վերջինս վախից ու անսպասելիությունից շունչը փչում էր: Բուդադյանի տարբերակում *հանկարծակի ուստյունով կարողանում էր վերջ տալ նրանց թովոուն կյանքին* ներգործությունն այլ է. տպավորությունն այնպիսին է, որ Ընծառյուծի ուստյունն էր վերջ

տալիս նրանց կյանքին: Իրականում, զուևավորման շնորհիվ նա անտեսանելի էր և կարողանում էր հանկարծակիի բերել իր գոհին:

Didn't know which way to jump զավեշտական արտահայտությունը նույնպես ստեղծվել է անգլերենում գոյություն ունեցող *to see which way the cat jumps* դարձավածի նմանողությամբ, որ նշանակում է «սպասել մինչև իրավիճակը պարզվի»: Սակայն հեղինակը *which way to jump* արտահայտությունը օգտագործել է ոչ թե փոխաբերական, այլ բուն իմաստով, այն է՝ որ կողմ ցատկել, գնալ:

Կենդանիների՝ անտառ հեռանալուց հետո ընծուղում ու եթովպացին երկար ժամանակ ապարդյուն որս են անում և զարմանում, թե ուր է անհետացել որսը.

...wandering where all their breakfasts and their dinners and their teas had gone.

...զարմանում, թե ուր են չքացել իրենց նախաճաշերը, ճաշերը և ընթրիքները: (Բուդաղյան)

...ապուշ կտրած մտածում, թե ուր անհետացան իրենց նախաճաշի, ճաշի ու ընթրիքի խորտիկները: (Սեֆերյան)

Բնագրում *breakfast, dinner, tea* բառերը հոգնակի թվով են օգտագործվել՝ նկատի ունենալով այն կենդանիներին, որոնք սնունդ էին ծառայում նրանց համար: Ոճական այս հնարով, որը կոչվում է փոխանունություն, Քիփլինգը ստեղծել է մի յուրօրինակ զավեշտ: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ բնագրի *tea* - թեյ բառի փոխարեն հայերեն երկու տարբերակներում էլ ունենք *ընթրիք* բառը: Բանն այն է, որ անգլիացիների ավանդական թեյընմույր, որը սովորաբար տեղի է ունենում ժամը 5-ին, հատուկ չէ հայ իրականությանը, հետևաբար թարգմանիչները նախընտրել են *ընթրիք* տարբերակը: Հեքիաթում նման ևս մեկ դեպք կա.

"For goodness' sake," said the Leopard at tea-time, "let's wait till it gets dark."

Բայց այստեղ ավելի մեծ զավեշտ է այն, որ տարաշխարհիկ այդ անտառում ակնարկվում է անգլիական ավանդական թեյընմույր, և ավելին, կենդանիները դրանով որոշում են ժամը և ծրագրում են իրենց գործողությունները:

Եվ, քանի որ շատ սոված էին, ընծառյուծն ու եթովպացին սկսում են ուտել ինչ պատահի՝ բզեզներ, առնետներ: Նրանց փորիկները սկսում են ցավալ (չէ՞ որ ծեռքի տակ ընկած ամեն բան չեն ուտի):

...they had the Big Tummy-ache.

...նրանք երկուսն էլ սարսափելի փորագավ ընկան: (Բուդաղյան)

...երկուսի Փորիկներն էլ Անյառի ցավեցին: (Սեֆերյան)

Քանի որ սա մանկական խոսքին հատուկ նորաբանություն է, որտեղ որոշյալ հոդի և գլխատառերի գործածությունը հատուկ արտահայտչականություն է հաղորդում, Սեֆերյանի տարբերակն ավելի հարազատ է երեխայի բառապաշարին (չէ՞ որ նրա փորհին էլ երբեմն ցավում է, երբ նա շատ կամ ինչ-որ սխալ բան է ուտում):

Վերջապես Ընծառյուծն ու Եթովպացին հանդիպում են Շնագլուխ Կապիկին.

...then they met Baviaan – the dog-headed, barking Baboon, who is Quite the Wisest Animal in All South Africa.

Չետո նրանք հանդիպեցին Բավյանին՝ շնագլուխ, հաչող Բաբուն կապիկին, որն ամենախմաստունն էր ամբողջ Հարավային Աֆրիկայի բոլոր կենդանիներից: (Բուդաղյան)

Շուտով հանդիպեցին Շնագլուխ կապիկին, շան գլուխ ունեցող հաչացող Կապիկին, որն ամենայն իրավամբ ամենախմաստուն Կենդանին էր ամբողջ Հարավային Աֆրիկայում: (Սեֆերյան)

Baviaan և հոլանդերեն *baboon* բառերը նշանակում են *կապիկ*, որն ունի շան գլուխ: Այն ֆիզիկապես շատ ուժեղ կենդանի է, բայց երբեք աչքի չի ընկել իր մտավոր ունակություններով: Քիփլինգի Կապիկը ամենախմաստունն է ողջ Հարավային Աֆրիկայում, որովհետև նա գիտի, թե ուր է հեռացել որսը, և գիտի, թե որն է Ընծառյուծի և Եթովպացու փրկության ճանապարհը: Բուդաղյանի թարգմանության մեջ ունենք հայերեն տառադարձություն՝ Բավյան, իսկ Սեֆերյանը նախընտրել է բառի բացատրական նկարագրական թարգմանությունը, խուսափելով "*baviaan*", "*baboon*" բառերի գործածությունից: (Այդ դեպքում ինչու՞ Քիփլինգը չի գործածել շատ ավելի հասկանալի ու ընդունված *monkey* կամ *ape* բառերը)

Ընծուղտի այն հարցին, թե որտեղ է ողջ որսը, հաջորդում է Եթովպացու հարցը, թե որտեղ է բնիկ Կենդանական Աշխարհի այծմյան բնակավայրը: Իրականում, ըստ էության երկուսի հարցերն էլ նույն բանն են նշանակում և նույն պատասխանն էին ակնկալում, բայց, քանի որ Եթովպացին չափահաս էր, նա սիրում էր երկարաբանել ու պարզ բաները բարդ անուններով կոչել: Սակայն կարևորն այստեղ ոչ թե երկարաբանությունն է, այլ այն, որ Քիփլինգը Եթովպացու միջոցով ներմուծում է երեխայի համար բոլորովին անծանոթ բառեր՝ տեքմիններ (*habitat, aboriginal, Fauna, Flora*), որոնք, սակայն, միանգամայն հասկանալի են երեխային մի պարզ պատճառով, որ Եթովպացու հարցին նախորդել էր Ընծուղտի նույն հարցը, միայն թե պարզ, երեխային հասկանալի լեզվով: Միգուցե կարելի է հայերենում գործածել *բնակավայր*,

տեղաքմակ, ֆաունա, ֆլորա բառերը՝ հեղինակի միտման համարժեքությունը պահպանելու համար:

Հետագա պատմության առանցքը բառախաղն է, որը կառուցված է *spot* բառի երկու իմաստների վրա: *Spot* բառը հայերեն թարգմանությամբ նշանակում է՝ *բիծ, պուտ, խայտ*, այն ունի նաև *տեղ* իմաստը: *To go into other spots* արտահայտությունը կարող է նշանակել *ժածկվել գծերով, պուտերով* և *գնալ, հեռանալ այլ տեղեր, վայրեր*: Շնագլուխ Կապիկը Ընծառուտի ու Եթովպացու հարցին պատասխանում է.

The game has gone into other spots and my advice to you, Leopard, is to go into other spots too.

Այս նախադասության մեջ տեղ են գտել *to go into spots* արտահայտության միաժամանակ երկու իմաստները. առաջին դեպքում՝ *the game has gone into other spots* ասելով Շնագլուխ Կապիկը նկատի ուներ այն, որ կենդանիները հեռացել են, զնացել են այլ վայրեր, իսկ երկրորդ դեպքում խոսքը Ընծառուտի, նաև Եթովպացու արտաքին տեսքի մասին է, այն է՝ վաղուց ժամանակն է, որ նրանք էլ ժածկվեն գծերով՝ փոխեն արտաքինը, հարմարվեն ֆլորային՝ Բուսական աշխարհին:

Որսերը գնացել են ուրիշ տեղեր: Իմ խորհուրդն է քեզ, Ընծառուտ, դու էլ նույնն արա և ինչքան շուտ, այնքան լավ: (Բուդադյան)

Որսը գնացել է ուրիշ գծերով. իմ խորհուրդը քեզ, Ընծառուտ, որքան կարող ես արագ ծածնամիտ ըծերով: (Սեֆերյան)

Թարգմանական երկու տարբերակներում էլ չի պահպանված բառախաղը. ավելին, առաջին տարբերակում թարգմանիչը չի պահպանել նաև իմաստային համարժեքությունը: Չէ՞ որ Շնագլուխ Կապիկը *my advice to you is to go into other spots too* ասելով ոչ թե խորհուրդ էր տալիս Ընծառուտին ու Եթովպացուն «գնալ ուրիշ տեղեր», ինչպես հասկացվում է թարգմանությունից, այլ մտածել արտաքին փոփոխությունների մասին: Սեֆերյանի թարգմանության մեջ կորել է արտահայտության երկիմաստությունը, այսինքն թարգմանիչը հայերենում գործածել է անգլերեն արտահայտության միաժամանակ երկու իմաստները: Արդյունքում, երկու դեպքում էլ ընդհատվել է քիփլինգյան բառախաղի շարունակականությունը: Այն բանից հետո, երբ Ընծառուտն ու Եթովպացին անտառում հանդիպում են արդեն տեղի բնությանը հարմարված, գունավորված, անորսալի ու անտեսանելի դարձած կենդանիներին, զգում են, թե ինչ օտար են իրենք այդ միջավայրում.

Գիտակցելով իրենց անհամապատասխանությունը շրջապատող միջավայրին, Եթովպացին փոխում է իր մաշկի գույնը՝ դառնալով մուգ

շագանակագույն, մանուշակագույնին մոտեցող կապարակապտավուն երանգով՝ հետևելով Շնագլուխ Կապիկի խորհրդին, քանի որ ճիշտ էր հասկացել նրա ասածը, և նույնը խորհուրդ է տալիս անել Ընծառյուծին:

"You take Baviaan's advice too. He told you to go into spots."

"So I did," said the Leopard. "I went into other spots as fast as I could. I went into this spot with you, and a lot of good it has done me."

"Oh," said the Ethiopian, "Baviaan didn't mean spots in South Africa. He meant spots on ypur skin."

-Դու էլ հետևիր Բավյանի խորհրդին: Նա քեզ ասաց, որ դու էլ մտածես նոր կետեռոհ մասին:

-Բայց ես այդպես էլ արի, ես տեղափոխվեցի Դարավային Աֆրիկայի ուրիշ շատ կետեր. և այն էլ այնքան արագ, ինչքան կարող էի: Այս կետն էլ եկա քեզ հետ և ինչ օգուտ:

-Օ, չէ, Բավյանը Դարավային Աֆրիկայի այն կետեռոհ մասին չէ, որ ասում էր: Նա ասում էր քո մոռոռու կետեռոհ մասին: (Բուդադյան)

Վերևում *to go into spots* արտահայտությունը Բուդադյանը թարգմանել էր՝ *գնացել են ուրիշ տեղեր*, դու էլ *նույնն* արա: Այս հատվածում անգլերենի նույն արտահայտությունը կետեր բառով է փոխարինվել: Այսինքն, նախորդ հատվածում չկայացած բառախաղի հետևանքով ընդհատվել է մտքի շարունակականությունը և ամբողջ լեզվախաղը: Փաստորեն, Ընծառյուծը Շնագլուխ Կապիկին հասկացել էր ճիշտ այնպես, ինչպես Բուդադյանի մեկնաբանությունն է առաջարկում, որը սխալ էր:

-Դու էլ հետևիր Շնագլուխ Կապիկի խորհրդին: Նա քեզ ասաց, որ գնաս ուրիշ գծերով ու ծածկվես բծերով:

-Ես հենց այդպես էլ արեցի, քեզ հետ միասին հնարավորին չափ արագ գնացի ուրիշ գծերով և լավ էր, որ եկա:


-ՕՖ, չես հասկացել, Կապիկը ի նկատի ուներ ոչ թե Դարավային Աֆրիկայի գծերը, այլ մաշկիդ բծերը: (Սեֆերյան)

Սեֆերյանի թարգմանության մեջ տեղ են գտել անգլերենի *to go into spots* արտահայտության միաժամանակ երկու իմաստները՝ *գնալ ուրիշ գծերով* և *ծածկվել բծերով*, այսինքն՝ անգլերեն վերոհիշյալ արտահայտության երկիմաստությունը վերացել է, ինչն արդեն նշանակում է, որ բառախաղը չի կայացել:

Դեբիաթում տեղ է գտել ևս մեկ բառախաղ. երբ Ընծառյուծը վերջապես գիշերային որսի ժամանակ բռնում է Ընծուղտին և տեսնում է նրա վրա առաջացած գծերը, իր զարմանքն է հայտնում՝ ասելով.

Don't you know that if you were in High Veldt I could see you ten miles off? Now you haven't any form.

Եթե Վերին Վելդում լինեիր, ես քեզ տասը մղոն հեռավորությունից կնկատեի. այդ դու ոչ մի բանի նման չես: (Բուդադյան)



2գիտես, երբ Բարձր Սարահարթում էիր, ես տասը մղոն հեռավորությունից ծանաչում էի քեզ: Հիմա դու ձև չունես: (Սեֆերյան)

Ընծուղողը պատասխանում է.

Yes, but this isn't the High Veldt. Can't you see?

I can now, said the Leopard, but I couldn't yesterday.

See բառը անգլերենում կարող է նշանակել *տեսնել* և *հասկանալ*: *Can't you see* ասելով Ընծուղողը նկատի ուներ *չես հասկանում*, որ ամեն ինչ փոխվել է ու այլևս Բարձր Սարահարթում չեն: Ընծուղողը նրա ասածը այլ կերպ է հասկանում. *չես տեսնում*, որ սա Բարձր Սարահարթը չէ, և այդ պատճառով պատասխանում է՝ երեկ չէի տեսնում, բայց այսօր տեսնում եմ: Հայերեն թարգմանություններում այս բառախաղը նույնպես չի կայացել, բանի որ թարգմանիչները մախ *I could see you ten miles off* արտահայտության մեջ *see* բառը փոխարինել են *կնկատեի*, *կճանաչեի* ձևերով, իսկ բուն բառախաղում *can't you see* արտահայտության փոխարեն տեղ է գտել *չես տեսնում* ձևը:

Այո, բայց չես տեսնում, որ սա Վերին Վելդը չէ: Սիթե՞ն չես տեսնում: (Բուդաղյան)

Եիշտ է, բայց սա Բարձր Սարահարթը չէ, *չես տեսնում*: (Սեֆերյան)

Ընծառյուծը նույնպես հետևում է Շնագլուխ Կապիկի խորհրդին և ծածկվում է բծերով, իսկ Եթովպացին, որը սիրում էր երկարաբանել ու վերամբարձ խոսել, Ընծառյուծին թվարկում է այն առավելությունները, որ նա ձեռք է բերել իր արտաքինը փոխելով, և պատկերավոր ու համոզիչ հնչելու համար իր խոսքն ամրագրում է համեմատություններով.

You can lie out on the bare ground and look like a heap of pebbles. You can lie out on the naked rocks and look like a piece of pudding-stone. You can lie out on a leafy branch and look like sunshine sifting through the leaves; and you can lie right across the centre of a path and look like nothing in particular.

Եթե պառկես մերկ գետնին, կնմանվես խճաքարի կույտի: Լերկ ժայռերին փոկած՝ ամազաքար կհիշեցնես, սաղաթթախիտ ծառին թառած՝ տերևների առանքիզ թափանցող արևաշողի տպավորություն կթողնես: Ուզենաս մեջտեղում վեր կրնկնես ու առանձնապես ոչնչի չես նմանվի:

Բայց արդյոք Եթովպացին կարո՞ղ է իր մաշկը փոխել, իսկ ընծառյուծը՝ բծերով ծածկվել: Քիփկնզն այս հարցն իհարկե ակնկալում էր: Եթե մեծահասակները այս պատմությունը լսած չլինեին, բացատրում է նա, նրանց մոտ այդ հարցը չէր առաջանա: Եթովպացին փոխեց իր գույնը, իսկ Ընծառյուծը ծածկվեց բծերով, բայց նրանք այլևս չեն փոխվի, որովհետև նրանք միանգամայն բավարարված են իրենց ներկայիս տեսքով:

Հեքիաթում տեղ են գտել նաև մի շարք արտասովոր արտահայտություններ ու ոճական հնարներ, որոնք ամբողջացնում են Քիփիլինգի մտահղացումը՝ նրա անսպառ ու անքոնագրոս լեզվախաղը: Օրինակ, սաղարթախիտ անտառը նկարագրելիս հեղինակը օգտագործում է մի շարք մակդիրներ, որոնք կապված են բաղաձայնությով և հանգավորմամբ ու յուրահատուկ ռիթմ են հաղորդում շարադրանքին: Եվ, ինչպես ինքը՝ հեղինակն է նշում, եթե ընթերցողը փորձի նկարագրությունն արագ կարդալ, նրա առջև անտառի իրական պատկերը կլինի՝ խիտ, թովռուն, սահուն ստվերներով, շատ մութ, բայց միաժամանակ լի լուսավոր կետերով.

...they saw a great, high, tall forest full of tree trunks all 'sclusively speckled and sprottled and spotted, dotted and splashed and slashed and hatched and cross-hatched with shadows.
որտեղ *sprottled*, *spottled* բառերը *spot* բառի հիման վրա ստեղծված նորաբանություններ են:

Շատ օրերից հետո միայն նրանք տեսան մեծ ու բարձր ծառերի անտառը, որը լի էր բծանման, մանեկանման, կետանման և կառնտանման երերուն ստվերներով: (Բուդաղյան)

Վերջապես, երկար ու ծիգ օրերից հետո, տեսան մի հսկայական, երկնաշյաց, բարձրաբերձ անտառ՝ լի ծառաբներով, բացարձակապես ծածկված ատավոր-պեպենոտ, խաւավոր-խաւուտիկ, խաւածն-խաւուտավոր, գծավոր-բծավոր ստվերներով: (Սեֆերյան)

Միանգամայն հասկանալի է, որ թարգմանության դեպքում հնչյունական կողմի և հանգավորման ու ներքին ռիթմի պահպանումը գրեթե անհնար է, քանի որ յուրաքանչյուր լեզու իր ներքին հնարավորություններն ունի, ինչպես նաև հնչյունական խմբերը տարբեր լեզուներում տարբեր ասոցիացիաներ են առաջացնում: Թարգմանիչը նման դեպքում կանգնում է շատ բարդ ընտրության առջև՝ պահպանել իմաստային համարժեքությունը՝ զոհաբերելով հնչյունական կողմը, կամ պահպանել հանգը, ռիթմն ու հնչյունական կազմակերպումը՝ զոհաբերելով բովանդակային կողմը: Քանի որ խոսքը վերաբերում է գեղարվեստական թարգմանությանը, նման մոտեցումը ընդունելի չէ: Թարգմանչի խնդիրը պետք է լինի հասկանալ, վերլուծել, ըմբռնել այն ներգործությունը, որին հեղինակը հասել է բնագրում տվյալ հնչյունական ոճական հնարների գործածմամբ և թիրախ լեզվում վերստեղծի հնարավոր համարժեք ներգործությունը՝ տվյալ լեզվին ներհատուկ միջոցներով: Հակառակ դեպքում, ոչ ընթերցողը, ոչ էլ ունկնդիրը, որքան էլ արագ կարդան տողերը, չեն հայտնվի Քիփիլինգյան արտասովոր անտառում: